ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

2022-2023 ուստարի

Digitally signed by GALSTYAN NVER
2708680250
Date: 2022.09.27 09:20:39 AMT

Գեղարքունիքի մարզի

Ծովազարդ գյուղի միջնակարգ

դպրոց11-րդ դասարան

Դասղեկ՝ ԱՆուշ Օհանյան

Դասղեկի գործառույթները

Դաստիարակչական աշխատանքներ իրականացնելու ընթացքում դասղեկը կատարում է՝

• աշակերտների մանկավարժահոգեբանական հետազոտություն (մանկավարժահոգեբանական ախտորոշում),
• կրթության գործընթացում դասարանական կոլեկտիվի փոխհարաբերությունների՝(փոխհարաբերություններ աշակերտների միջև, աշակերտների և ուսուցիչների միջև, ներդասարանական, միջդասարանական փոխհարաբերություններ) վերլուծություն, համակարգում, կարգավորում,
• դասարանական կոլեկտիվի կենսագործնեության փուլերի (կիսամյակ նայլն) և միջոցառումների (դասղեկական ժամեր, տեղեկատվական բոպեներ, ստեղծագործական միջոցառումներ, մրցույթներ, ցուցահանդեսներ և այլն) պլանավորում, նախապատրաստում, իրականացում, արդյունքների ամփոփում, վերլուծություն,
• սովորողների սոցիալական պաշտպանություն, (ցանկալի է սոցիալական մանկավարժի հետ համատեղ),
• աշխատանք ծնողների հետ,
• Մանկավարժական աջակցություն աշակերտական ինքնավարության դասարանական մարմնին,
• դասամատյանի և աշակերտական օրագրերի և այլ փաստաթղթերի վարման կազմակերպում:

Դասղեկի աշխատանքի փուլային նկարագրությունը

Ուսումնական տարվա սկզբին

• Կազմում է աշակերտների ցուցակը և ձևավորում դասամատյանը (սեպտեմբեր, առաջին շաբաթ):
• Կազմակերպում է դասագրքերի ստացումը գրադարանից (սեպտեմբեր, առաջին շաբաթ):
• Ուսումնասիրում է աշակերտների ընտանեկան դաստիարակության պայմանները (առաջին քառորդ):
• Վերստուգում կամ պատրաստում է դասարանի սոցիալական անձնագիրը և հանձնում է սոցիալական մանկավարժին (առաջին քառորդ):
• Հավաքում է սպառիչ տեղեկություններ՝ լրացուցիչ կրթության հաստատություններում, դասարանի աշակերտների մասնակցության մասին (հոկտեմբեր):
• Աշակերտների շրջանում՝ նրանց ընդունակությունները զարգացնելու նպատակով, աշխատանք է տանում՝ բազմազան գործունեության ոլորտում (այդ թվում՝ լրացուցիչ կրթության) նրանց ներգրավելու համար (առաջին քառորդ):
• Աշակերտների հետ համատեղ կազմակերպում է դասարանի կենսագործունեության պլանի ձևավորում:
• Կազմում է դասարանի դաստիարակչական աշխատանքի պլանը, համաձայնեցնում է այն դասղեկական մեթոդ միավորման ղեկավարի հետ և հանձնում է դաստիարակության գծով փոխտնորենին (սեպտեմբեր):

Ամենօրյա աշխատանք

• Դասամատյանում նշում է բացակայությունները
• Մանկավարժական օգնություն է ցույց տալիս՝ դասարանական և դպրոցական ինքնավարության օղակների, տվյալ դասարանի ներկայացուցիչների աշխատանքների կազմակերպմանը:Հետևում է աշակերտների արտաքին տեսքի պատշաճությանը:
• Հետևում է աշակերտների սնվելուն, և բարեկիրթ վարքին՝ բուֆետում, ճաշարանում:
• Հետևում է դասարանում հերթապահության կազմակերպմանը:
Ամենշաբաթյա աշխատանք
• Աշակերտների օրագրերի ստուգում:
• Դասամատյանի վարման վերահսկողություն:
• Դասղեկական ժամի վարում
• Դպրոցի, դասարանի վերահսկողությանն հանձնված տարածքի մաքրության վերահսկում:
• Այլ պլանավորված աշխատանքների կատարում:

Ամենամսյա աշխատանք

• Դասարանի կոլեկտիվը նախապատրաստում է, կազմակերպում է՝ համադպրոցական գործընթացներին մասնակցելու համար:
• Օգնում է դասարանական խորհրդին ամփոփելու դասարանի կենսագործունեության փուլերի աշխատանքը:
• Պարապմունքներ է անցկացնում՝ ճանապարհային եթևեկության (ցածր դասարաններ), անվտանգ կենսագործունեության կանաններ (բարձր դասարանների) համար:
• Կազմակերպում է դասարանին հատկացված դպրոցական տարածքի ամենամսյա մաքրում:
• Հերթապահում է համադպրոցական միջոցառման ժամանակ (ըստ հերթապահության գրաֆիկի):
• Վերահսկում է իր դասարանի աշակերտների մասնակցությունը՝ խմբակներում, ակումբներում, խորհուրդներում:
Ուսումնական քառորդի ընթացքում
• Կազմակերպում է երեխաների առողջության պահպանման հետ կապված բժշկական երաշխավորությունների կատարումը:
• Օգնում է դասարանական խորհրդին կազմակերպել դասարանի կենսագործունեությունը (ընթացիկ պլանավորում, աշխատանքների կազմակերպում, քննարկում):
• Կազմակերպում է դասարանի հերթապահությունը դպրոցում (գրաֆիկի համաձայն):
• Օպերատիվ կերպով՝ դպրոցի տնօրենին, դաստիարակության գծով փոխտնօրենին, սոցիալական մանկավարժին տեղեկացնում է սովորողների դեվիանտ վարքի դրսևորումների, դպրոցական կանոնակարգի կոպիտ խախտումների մասին: Իր աշակերտների սոցիալական ապահովության համար նրանց հետ համատեղ որոշումներ է կայացնում:
• Հետևում է դասագրքերի պահպանմանը:
• Ճշտում է իր դասարանի աշակերտների՝ լրացուցիչ կրթության օղակներում մասնակցության մասին տեղեկությունները:
• Վարում է մանկավարժական խորհրդատվություն:

• Վարում է ծնողական ժողովներ:
• Կազմակերպում է ծնողական խորհրդի աշխատանքները, համաձայն վերջինիս պլանի:
• Մասնակցում է դասղեկական մեթոդ մկավորման (դմմ) սեմինարներին և այլ միջոցառումներին մասնագիտական որակավորման բարձրացման նպատակով:

Կիսամյակի վերջում

• Կազմակերպում է ուսումնական կիսամյակում դասարանի կրթադաստիարակչական կենսագործունեության արդյունքների ամփոփումը:
• Դպրոցի կրթադաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրենին ներկայացնում է դասամատյանը և հաշվետվություն դասարանի առաջադիմության մասին

Արձակուրդների ընթացքում

• Մասնակցում է դասղեկական մեթոդ միավորման արձակուրդային աշխատանքներին:
• Հասարակական միությունների, աշակերտական ակտիվի, ծնողների, հնարավոր է նաև մյուս դասարանների հետ համտեղ, կազմակերպում է իր դասարանի արձակուրդային միջոցառումները:

Ուսումնական տարվա վերջում

• Դասարանի ակտիվի հետ համատեղ, նախապատրաստում է դասարանի կենսագործունեության վերաբերյալ հաշվետվություն և կազմակերպում է ակտիվի վերընտրություն:
• Կատարում է (պատրաստում է) դասարանի կրթադաստիարակչական աշխատանքի ամփոփիչ վերլուծություն (ըստ հաշվետվության ձևի) և հանձնում է դպրոցի դաստիարակության գծով փոխտնօրենին:
• Կազմակերպում է դասագրքերի հանձնումը գրադարան:
• Կազմակերպում է դասարանը նորոգելու, ներկելու աշխատանքներ:
• Երեխաների ծնողներից տեղեկություններ է հավաքում նրանց ամառային հանգստի մասին:

Ավարտական դասարանի դասղեկը

• Վերջին ուսումնական տարվա ընթացքում հավաքում է տեղեկություններ՝ աշխատանքի անցնելու կամ կրթությունը շարունակելու աշակերտների ծրագրերի մասին:
• Տարվա ընթացքում, ծնողների և աշակերտների հետ համատեղ, կազմակերպում է ավարտական միջոցառումների նախապատրաստական աշխատանքները:
• Հավաքում է և ունենում է ամբողջական տեղեկություններ՝ իր աշակերտների աշխատանքի անցնելու և ուսումը շարունակելու վերաբերյալ (մինչև հաջորդ ուս ումնական տարվա սկիզբը):

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ(դասարանի ընդհանուր բնութագիրը) Դասարանում սովորում են 12 աշակերտ: Ընդհանուր առմամբ բոլորն ունեն լավ ընդունակություններ: Դասարանում կան տարբեր առաջադիմություն ունեցող աշակերտներ: Դասարանում բոլոր աշակերտները համախմբված են: Դասարանի բոլոր սովորողների սոցիալական վիճակը գնահատվում է բավարար: Չնայած այս հանգամանքին՝ երեխաները հաճախում են դպրոց ճիշտ ժամանակին և ցուցաբերում են ակտիվություն: Դասարանում չկան դժվար դաստիարակվող աշակերտներ:

2.Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում

Դաստիարակության սկզբունքը այն հիմարար ելակետն է, որոշում է դաստիարակչական գործընթացի ընդհանուր ուղղությունը, նրա բովանդակությունը: Դաստիարակության սկզբունքների համակարգը ընդգրկում է նրա նպատակաուղղվածությունը, կապը կյանքի պրակտիկայի հետ, դաստիարակության նկատմամբ համալիր մոտեցումը, երեխայի անձի նկատմամբ հարգանքի զուգակցումը: Անհրաժեշտ է կարևորել մարդու մեջ դրականի վրա հենվելու սկզբումքը, որի էությունը կայանում է նրանում, որ յուրաքանչյուր երեխայի մեջ նկատվի ամենից ուժեղ կողմը, հասնել նրան, որ կենսունակը իր իրականացումն ու զարգացումը ստանա գործունեության մեջ:Ուսումնա-դաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը: Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն սովորողների ակտիվության բարձրացմանը: Դասից և վարքից անբավարար աշակերտների հետ աշխատել առանձին , որպեսզի շտկել այդ թերությունները: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենայի, համագործակցություն, փոխօգնություն) :

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1. Հոգևոր դաստիարակություն

Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք կյանքի հոգևոր արժեքների նկատմամբ , որ կարողանան սահմանազատել հոգևոր և նյութական արժեքները: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:

3.2. Գեղագիտական դաստիարակություն

Գեղագիտական դաստիարակությունը մանկավարժների համատեղ գործունեության գործընթացն է՝ ուղղված դպրոցականների գեղագիտական կուտուրայի ձևավորմանը: Ֆիլմերի, արվեստի երկերի, առարկաների ու երևույթների միջոցով բացատրել և վերլուծել թե գեղեցիկը ինչ դեր ունի ներկայիս կյանքում: : Լսել աշակերտների կարծիքները այդ նյութի վերաբերյալ:

3.3. Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Ռազմահայրենասիրական դաստիարակության նպատակն է աշակերտների մոտ սեր արթնացնել հայրենիքի, նրա սահմանները ամուր պահելու նկատմամբ: Հաճախակի կազմակերպել հայրենա-սիրական թեմաներով քննարկումներ,խրախուսել աշակերտների մասնակցությունը դպրոցում կազմակերպվող ռազմահայրենասիրական միջոցառումներին:

3.4. Ֆիզիկական դաստիարակություն

Ֆիզիական դաստիարակությունը հանդիսանում է դաստիարակության կարևոր բաղադրամաս և մեծ նշանակություն ունի անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման համար: Դասապրոցեսին և արտադասարա- նական պարապմունքներին նպաստել սովորողների մասնակցության ակտիվությանը՝ հաշվի առնելով նրանց տարիքային առանձնակատկությունները: Բացատրել և պահանջել , որ աշակերտները հետևեն իրենց ֆիզպատրաստությանը: Կոփեն իրենց մարմինները ֆիզվարժությունների և հնարների միջոցով:

3.5. Աշխատանքային դաստիարակություն

Աշխատանքային դաստիարակությունը նպաստում է աճող սերնդի ճիշտ զարգացման հիմնախնդրի լուծմանը:Աշխատանքային դաստիարակության նպատակները բազմազան են,ուստի և պետք էյուրաքանչյուր երեխայի ցուցաբերել անհատական մոտեցում:

3.6. Բնապահպանական դաստիարակություն

Մարդկային քաղաքականության պատմությունը թևակոխել է մի այնպիսի ժամանակա- շրջան,որի կարևորագույն և բնորոշ դրսևորումներից մեկը ահագնացող գլոբալ տեխնածին գործընթացներն են,ուստի և հարցը շատ կարևոր է: Բնության գեղեցկությունն ու դերը կյանքում գնահատելու և արժևորելու համար անհրաժեշտ է կազմակերպել էքսկուրսիաներ և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի շարք խնդիրներ , որոնք առկա են շրջապատում և այդ խնդիրը գլոբալ է: Մասնակցել կանաչապատման աշխատանքներին

3. 7 Դպրոց-ընտանիք կապը

Կարևորագույն հիմնախնդիր է դպրոց-ընտանիք կապի մշտապեսպահպանումը, քանզի մեկն առանց մյուսի չի կարող լիարժեք դրսևորվել, դրանք լրացնում են միմյանց և երկուստեք գործելու դեպքում արդյունքն ակնհայտ կլինի:

Դասարանի սոցիալական անձնագիրը

1. Երեխաների թիվը դասարանում 12

   ա) աղջիկ 6
   բ) տղա 6

1. Ընտանիքների թիվը
   ա) լրիվ կազմով
   բ) ոչ լրիվ կազմով 0

2. Վատ ապահովված ընտանիքների թիվը 0
   Նրանցում երեխաների թիվը

3. Բազմազավակ ընտանիքների թիվը 1
   Նրանցում երեխաների թիվը 4

4. <<Ռիսկային խմբի>> ընտանիքների թիվը 0

5. Ընտանիքներ, որտեղ ծնողները չեն աշխատում 0

6. Խնամակալության տակ գտնվող երեխաների թիվը 0

7. Դասերից հաճախակի բացակայելու հակում ունեցող երեխաներ 0

8. Դժվար դաստիարակվողերեխաներ 0

Դաստիարակչական աշխատանքների բնույթը		
Գործառույթները	Նպատակն ու խնդիրները	Ուղղվածությունը
1.Աշակերտի սոցիալական պաշտպանության գործառույթ	1.Դասարանական կոլեկտիվի ձևավորում	1.Քաղաքացիական պատասխանատվության ձևավորում, հարգանք երկրի պատմության և մշակույթի հանդեպ
2.Կազմակերպչական գործառույթ	2.Անհատի ձևավորմանը նպաստող, յուրաքանչյուրի անհատականությունը ողջունող և ներուժը բացահայտող միջավայրի ապահովում	2.Դասեր՝ նվիրված հայրենիքին, քաղաքին
3.Աշակերտական ինքնակառավարմ անխթանման գործառույթ, որը երաշխավորում է նրանց ինքնուրույնության խթանումը	3.Առողջ ապրելակերպի վարքագծի ձևավորում	3.Էքսկուրսիաներ պատմական հուշարձաններ, տեսարժանվայրեր
4.Ախտորոշման գործառույթ, որը ենթադրում է աշակերտների ելակետային մակարդակի վերհանում և շարունակական համեմատության մեջ փոփոխությունների արձանագրում	4.Դասարանում համակարգված աշխատանքի կազմակերպում	4.Վնասակար սովորույթների հանդեպ բացասական վերբերմունքի ձևավորում
5.Պլանավորման, ծրագրման գործառույթ, կանոնակարգում է մանկավարժական գործունեությունը, հեշտացնում է արդյունքների հետևողական վերահսկումը	5.Աշակերտների, աշակերտների ու մանկավարժների միջև բարյացակամ, ներդաշնակ փոխհարաբերությունների ձևավորում	5.Տարբեր խմբակների, զրույցների, բանավեճերի կազմակերպում
	6.Աշակերտների արժեքային համակարգի ձևավորում	6.Իրավականգիտակցությանն հանդուրժողականության խթանում
	7.Աշակերտների ստեղծագործական, հասարակայնամետ գործունեության կազմակերպում	

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	Կատարման ժամկետ	Կատարող ներ
	Ծնողական ժողով, որի նպատակն է ծնողներին տեղյակ պահել նոր ուսումնական տարվա կազմակերպման մասին, նոր մարտահրավերների և պահանջների մասին	Սեպտեմբերի 1-2	աշակերտ դասղեկ
I	Ավելի լավ է մեռնել կանգնած,քան թե ապրել ծնկաչոք	Սեպտեմբերի 5-9	աշակերտ դասղեկ
II	Հասունության շեմին	Սեպտեմբերի 12-16	աշակերտ դասղեկ
III	Ինչ է թրաֆիքինգը	Սեպտեմբերի 19-23	աշակերտ դասղեկ
IV	Կենդանիների զարմանահրաշ աշխարհում	Սեպտեմբերի 26-29	աշակերտ դասղեկ զինղել
V	Իմ ընտանիքը իմ ամրոցն է	Հոկտեմբերի 3-7	աշակերտ դասղեկ
VI	Մարդասիրությունը գթության քույրն է	Հոկտեմբերի 10-11	աշակերտ դասղեկ
VII	Մարդու և բնության անքակտելի կապը	Հոկտեմբերի 17-21	աշակերտ դասղեկ
VIII	Դատարկ մարդիկ են գոռոզանում	Հոկտեմբերի 31 Նոյեմբերի 1-4	Աշակերտ դասղեկ
IX	Թմրամոլությունը չարիք է	Նոյեմբերի 7-11	Դասղեկ աշակերտ
X	Թրաֆիքինգը Հայաստանում	Նոյեմբերի 14-18	Դասղեկ բուժքույր աշակերտ
XI	Ընկերոջ դերը մեր կյանքում	Նոյեմբերի 21-25	աշակերտ դասղեկ

XII	ՄԻԱՎ և ՁԻԱՀ: Պատի թերթի պատրաստում:	Նոյեմբերի 28-30 Դեկտեմբերի 1,2	աշակերտ դասղեկ
XIII	Հայաստանը իմ տունն է	Դեկտեմբերի 5-9	աշակերտ դասղեկ զինղեկ
XIV	Ինչպես ազատվել թմրամոլությունից	Դեկտեմբերի 12-16	աշակերտ դասղեկ
XV	1-ին կիսամյակի ամփոփում Ամանորյա և Սուրբ Ծննդյան հեքիաթ	Դեկտեմբերի 19-23	աշակերտ դասղեկ
XVI	Գնահատիր ժամանակը: Զրույց Ավանդական եկեղեցական տոներ <<Սուրբ Ծնունդ >>, թեմայով	Հունվարի 9-13	աշակերտ դասղեկ
XVII	Ներողամտությունը մեծահոգության դրսևորում է	Հունվարի 16-20	աշակերտ դասղեկ
XVIII	Սրբությամբ պահպանեցեք խաղաղությունը	Հունվարի 23-27	աշակերտ դասղեկ
XIX	Թող ոչ ոք չտեսնի պատերազմը	Հունվարի 30,31- փետրվարի 3	աշակերտ դասղեկ
XX	Զրույց <<Պատասխանատու քաղաքացի>>թեմայով	Փետրվարի 6-10	աշակերտ դասղեկ
XXI	Ավելի լավ է մեռնել կանգնած,քան թե ապրել ծնկաչոք	Փետրվարի 13-17	աշակերտ դասղեկ Ա. Անտոնյան
XXII	Հասունության շեմին	Փետրվարի 20-24	աշակերտ դասղեկ
XXIII	Ինչ է թրաֆիքինգը	Փետրվարի 27,28 Մարտի 3	աշակերտ դասղեկ
XXIV	Սերը որպես վեհ զգացմունք	Մարտի 6-10	աշակերտ դասղեկ
XXV	Լինել հանդուրժող	Մարտի 13-17	աշակերտ դասղեկ Ն. Աղասյան
XXVI	Հասունության շեմին	Մարտի 20-24	աշակերտ դասղեկ
XXVII	Ավելի լավ է խավարի մեջ մի լույս վառել, քան անվերջ խոսել խավարից	Ապրիլի 3-7	աշակերտ դասղեկ
XXVIII	Մասնագիտության կողմնորոշում	Ապրիլի 10-14	աշակերտ դասղեկ

XXIX	Ինչպես ձևավորել բարի դրացիական հարաբերություններ	Ապրիլի 17-21	աշակերտ դասղեկ
XXX	<< Հայոց Մեծ եղեռն >> աշակերտներին ներկայացնել թուրքերի կատարած ոճրագործությունը :	Ապրիլի 24-28	աշակերտ դասղեկ Ա. Անտոնյան
XXXI	Բարձր գնահատել ինքնասիրությունը	Մայիսի 1-5	աշակերտ դասղեկ
XXXII	Մայիսը մեր հաղթանակների ամիսն է	Մայիսի 8-12	աշակերտ դասղեկ զինղեկ
XXXIII	<<Մայիսյան հերոսամարտեր>>.թեմայով: Սարդարապատ; Բաշ-Ապարան; Ղարաքիլիսա	Մայիսի 15-19	աշակերտ դասղեկ
XXXIV	ՈՒսումնական տարվա ամփոփում	Մայիսի 22-26	դասղեկ

Դասարանի կանոնակարգը

1. Աշակերտը պարտավոր է չբացակայել և չուշանալ դասերից:
2. Եթե խիստ հարգելի պատճառով բացակայությունը կամ ուշացումը անխուսափելի է, ծնողը պարտավոր է նախապես տեղեկացնել դպրոցի տնօրենությանը

3. Աշակերտը ուստարվա ընթացքում՝ մինչև մայիսի 1-ը, 20-30 օր կամ 120-200 ժամ դասերիցբացակայելու դեպքում հանձնում է քննություններ ուսումնական պլանով նախատեսված առարկաներից: Քննություններից անբավարար գնահատական ստացած կամ 200 ժամից ավելի բացակայած սովորողը կրկնում է տվյալ ուսումնական տարվա դասընթացը:

4. Աշակերտը պարտավոր է դպրոց մտնելիս անջատել բջջային հեռախոսը և այն միացնելմիայն դպրոցից դուրս գալուց հետո: Կարգը խախտելու դեպքում հեռախոսը կվերցվի և կվերադարձվի ծնողին:

5. Դպրոցի միջանցքներում և դասասենյակներում պահպանել մաքրություն :

6. Ուսումնական պարապմունքներից սովորողի հաճախակի անհարգելի բացակայությանհամար պատասխանատվություն է կրում ծնողը՝ օրենքով սահմանված կարգով /Հ.Մ.Օ. գլուխ 5 հոդվ. 6/:

7. Ծնողը, ըստ Հ.Մ.Օ. գլուխ 5, հոդված 28,5,6,7,8 կետերի պարտավոր է

* հարգանք դաստիարակել ուսումնական հաստատության և մանկավարժների նկատմամբ

* համագործակցելով ուսուցչի հետ՝ վերահսկել տնային աշխատանքների կատարումը

* ապահովել սովորողի աշակերտական պատշաճ տեսքը,սանիտարական հիգիենան,պայուսակը և գրենական անհրաժեշտ պարագաները, արգելվում է շպար և արդուզարդ

* պատշաճ պահպանել դասագրքերը ուստարվա ընթացքում, իսկ կորցնելու դեպքում հատուցել գրքի արժեքը

* հատուցել իր երեխայի կողմից ուսումնական հաստատությանը հասցված վնասը

* սովորողին զերծ պահել ուսումնական հաստատության կանոնադրությամբ արգելվածիրերի օգտագործումից:

Ծնողական ժողովների օրակարգեր

Օրակարգային հարցեր 1 – Սեպտեմբեր

1. Ծնողկոմիտեի նախագահի և անդամների ընտրություն:
2 Դասագրքերի վարձավճարների հավաքագրման մասին:
3 Հակահամաճարակային կանոնների պահպանման հետկապված հարցերի քննարկում:
4 Կարգապահական հարցերի քննարկում:

Օրակարգային հարցեր 2 – Փետրվար

1.Առաջին կիսամյակի ամփոփում:
2 Աշակերտների հաճախումների մասին:
3. Ընթացիկ հարցեր

Օրակարգային հարցեր 3 – Ապրիլ

1. Կարգապահական հարցերի քննարկում
2. Ուսման առաջադիմության և բացակայությունների հետկապված հարցերի քննարկում
3. Պատմամշակութային էքսկուրսիայի կազմակերպում
4. Ընթացիկ հարցեր

Օրակարգային հարցեր 4 – Մայիս

1. Տարեկան առաջադիմության ամփոփում:
2. 2022-2023 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքներիամփոփում
3. Դասագրքերի հանձնում
4 .Ընթացիկ հարցերի քննարկում